

Հենրի Մատինյան
Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ,
պատմա-աշխարհագրական ֆակուլտետ,
պատմության ամբիոն, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ պ. գ. թ., պրոֆ. Մովսիսյան

ԿԻՆԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ (ԸՍՏ ԼՈՌԵՑԻՆԵՐԻ ԱԶՎԱԳՐԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅՅՆԵՐԻ)

Կանացի բնագրն արժե մեծ մարդկանց կանխատեսությանը:
ՕՆորե ող Բալզակ

Հին ժամանակներից սկսած՝ դարեր շարունակ հայկական նահապետական գերդաստանում և հայոց ավանդական ընտանիքում նրա անդամների տեղն ու դիրքը, իրավունքներն ու պարտականությունները որոշվել և տարբերվել են սեռատարիքային պատկանելության հիման վրա: Նահապետական գերդաստանները հայ իրականության մեջ համեմատաբար ավելի երկար են պահպանվել: Այդ գերդաստանների պահպանմանը միանշանակ նպաստել են սոցիալ-տնտեսական և պատմաքաղաքական իրավիճակը, սովորույթային իրավունքը, ինչպես նաև եկեղեցական կանոնադրությունը: Նահապետական գերդաստանում հայրական իշխանությունը բավականին ուժեղ է եղել՝ հասնելով անգամ ծայրահեղության: Գերդաստանի գլուխ կանգնած է եղել այդ գերդաստանի ամենատարեց տղամարդը, այլ կերպ ասած, ընտանիքի հայրը, որին տվել են նահապետ անունը, ինչպես հույների մոտ դեսպոտոսը կամ պատերֆամիլիասը հռոմեացիների մոտ: Նահապետն էր որոշում յուրաքանչյուրի աշխատանքը, գրեթե ինքնակամ ամուսնացնում որդիներին ու թոռներին, տնօրինում գերդաստանի անդամների ոչ միայն անձին, այլև ունեցվածքին, կարող էր պատժել և գերդաստանից հեռացնել նրան, ով կհամարձակվեր դեմ գնալ իր իշխանությանը:

Գերդաստանի ներսում զբաղմունքները տարանջատված էին ըստ սեռի և տարիքի: Արտաքին աշխատանքը կատարում էին տղամարդիկ, իսկ ներքինը՝ կանայք:

Գերդաստանի ներքին կառավարումը գտնվել է նահապետի կնոջ ձեռքին, որին բոլորը հարգել են և մեծ տեղ են հատկացրել նրա խոսքին: Առաքինի և կայուն ընտանիքի առաջացումը հնարավոր է եղել միայն կնոջ ազատության պայմաններում, իսկ «...կնոջ ազատագրման առաջին նախապայմանը,- գրում է Ֆ. Էնգելը,- ամբողջ կանացի սեռի կրկին վերադարձն է հասարակական աշխատանքի, իսկ այս, իր հերթին պահանջում է, որ առանձին ընտանիքը դադարի հասարակության տնտեսական միավորը լինելուց»¹: Գերդաստանի մեծ տանտիկինն է հսկել գերդաստանի հարսներին և աղջիկներին, առանց որի թույլտվության ոչ մի տեղ նրանք չէին կարող գնալ: Նա է պահել տան ողջ ունեցվածքը և բարիքները, առանց որի իմացության և թույլտվության ոչ ոք իրավունք չի ունեցել շտեմարանից, մառանից կամ այլ պահեստարանից որևէ բան վերցնել, մասնավորապես որ բոլոր բանալիները պահվում էին նրա մոտ: Գրականության մեջ լոռեցի կնոջը և առհասարակ հայ կնոջը վերագրվել են շատ սահմանափակ իրավունքներ, մինչդեռ իրականում դա այդպես չէ: Կնոջ նկատմամբ հարգանքը, նրա հեղինակությունը և իրավունքները որոշվել և տարբերվել են տարիքային սկզբունքով, ինչպես նաև գերդաստանին պարզևած երեխաների թվով: Որքան հայ կնոջ տարիքը և նրա երեխաների թիվը մեծ էին, այն-

քան մեծ էր հարգանքը նրա նկատմամբ և նրա իրավունքները՝ ընդարձակ:

Եթե գերդաստանի նահապետը տիրում էր իր իշխանությանը, հեղինակությանը և ուժով, ապա նրա կինը՝ իր սիրով, բարեգթությանը և հարգանքով: Նահապետից վախենում էին, մինչդեռ նրա կնոջը հարգում և սիրում: Առանձին դեպքում մեծ տանտիկինը դիմում էր վախի՝ սպառնալով գանգատվել նահապետին, եթե սերն ու հարգանքը չէին օգնում:

Որպես կանոն, Լոռվա ավանդական գերդաստանի մեծ տանտիկինը եղել է փազանց աշխատասեր և քրտնաջան, որն իր անձնական օրինակով դաստիարակում էր բոլորին: Արշալույսից մինչև ուշ գիշեր շարունակ աշխատելով՝ նա լավագույն օրինակ է տվել հարսներին և աղջիկներին աշխատելու, միևնույն ժամանակ նա հսկել է նրանց աշխատանքը՝ շարունակ նկատողություններ անելով և ուղղորդելով դեպի ճիշտ աշխատանքը: Նա է սովորեցրել նրանց կարել, ձևել, կերակուրներ եփել, պանիր, կարագ, մածուց, յուղ պատրաստել, գորգ գործել և այլ գործեր անել: Բոլոր հարսներն ու աղջիկները սիրում էին նրան, եթե իհարկե նա որևէ մեկին ավելի սիրելով և լավ վերաբերվելով չի խախտել ամբողջ գերդաստանի խաղաղությունը:

Գերդաստանի մեծ տանտիկնոջ օգնականը և նրան փոխարինողը համարվել է ավագ որդու կինը՝ չնայած այն հանգամանքին, որ վերջինս կարող էր հասակով փոքր լինել փոքր եղբայրների կանանցից: Սակայն նրա իշխանությունը նույնքան մեծ չի եղել, որքան սկեսրոջ իշխանությունը, և այդ պատճառով նա ավելի մեղմ էր վարվում հարսների ու տալերի հետ:

Պետք է նշել, որ դարավոր սովորույթային իրավունքը այնպես է կարգավորել և բաժանել ամեն մի հարսի և աղջկա իրավունքներն ու պարտականությունները, որ և՛ սկեսուրը, և՛ մեծ հարսը ոչ թե հրամայողի, աշխատանք բաժանողի, այլ սոսկ վերահսկողի դեր են կատարել:

Կյանքն ընտանեկան խիստ պայմաններում մշակել է որոշակի սովորույթային օրենքներ, կանոնակարգումներ, որոնք պահպանում էին սրբությանը: Հայ ժողովրդի սովորույթային համակարգում կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին լիարժեք ծառայելու գիտակցությամբ: Լոռեցի կինը մանկուց դաստիարակվում էր ընտանիքի շահերի պաշտպանության, հավատարմության, հնազանդության, ավանդույթների պահպանման, տնային աշխատանքներին նվիրվելու, իր և նոր ընտանիքի միջավայրին հարմարվելու պատրաստականության ոգով: Փոքր աղջիկների դասմիջավայրին հարմարվելու պատրաստականության ոգով: Փոքր աղջիկների դաստիարակությունը ընտանիքի բոլոր հարսների և կանանց հսկողության և հատկապես մեծ տանտիկնոջ հսկողության տակ էր: Ըստ լոռեցիների վաղեմի սովորության՝ 3-6 տ. աղջիկներին սովորեցնում էին գառներ և եգներ արածեցնել գյուղի մոտակայքում, կալ քաշել: 6-10 տ.-ում լոռեցի աղջիկը սովորում է զուլպա գործել, տունը և քունը, կալ քաշել: ամանները լվանալ, ջուր բերել և կատարել մեծերի տրված հանձնաբանականները: 10-15 տ. աղջիկը ջուր է բերում, գորգ և կարպետ գործում, կալի ցորենը խախալում, աղուն շինում, քաղիան անում, կար անում և այլն¹:

Լոռիում ևս, ինչպես և հայերով բնակեցված մյուս գավառներում, հայ ծնողներն իրենց զավակներին ամուսնացնում էին փոքր հասակում: Բավական էր, որ աղջիկը դառնար 9-10 տարեկան, իսկ տղան՝ 12-13 տարեկան, որ նրանց «հոգատար» ծնողները, առանց վերջիններիս համաձայնությունն ստանալու, նշանեին և պսակեին նրանց: Լինում էին դեպքեր, երբ խեղճ աղջիկները ամուսնության մասին անգամ գաղափար չէին ունենում: Ե. Լալայանը վկայում է, որ օրինակ Շահալիում (այժմ՝ Վահագնի) ոմն Եղիսաբեթ, որը պսակվելիս եղել է 10 տարեկան, հարսանիքի օրը փախել է և թաքնվել թոնրում²:

Վաղ պսակվելու հանգամանքը Լոռիում ուներ մի քանի լուրջ պատճառներ.

1. Սոցիալ-տնտեսական - Լինում էին դեպքեր, երբ աղջկա ծնողները, աղքատ

¹ Տե՛ս Էնգելս Ֆ., Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1965, էջ 98:

¹ Լալայան Ե., Երկեր, հ. 3, Երևան, 2004, էջ 157:

² Տե՛ս նույն տեղում, էջ 121:

լինելով, աշխատում էին հնարավորին չափ շուտ ազատվել մի «ուսող բերանից», քանի որ իրենք շատ հող և անասուններ չունեին, հետևաբար նրանք կարիք չունեին շատ աշխատողների, իսկ հարուստ ընտանիքները, ընդհակառակը, աշխատող ձեռքերի կարիք զգալով, շահագրգռված էին, որպեսզի իրենց տղային որքան հնարավոր է շուտ պսակեն և ավելացնեն իրենց աշխատողների քանակը:

2. Պատմաբաղադրական - Դարեր շարունակ հայ ժողովուրդը գտնվել է օտար նվաճողների դաժան տիրապետության ներքո, որոնք և հայերի վրա հաստատել են ավան-թալանի, բռնության և հարկադրանքի, վախի և մշտական սպառնալիքի պայմաններ:

Թշնամիները մշտապես առևանգել են հայ գեղեցիկ օրիորդներին՝ տանելով իրենց հարեճները: Նման պայմաններում հայ ժողովուրդը հարկադրված է եղել երիտասարդ աղջիկներին բոլոր հնարավոր միջոցներով հեռու պահել օտարների աչքից, սահմանափակել շփումները դրսի հետ՝ քողի տակ պահելով նրանց գեղեցկությունն ու հմայքը: Հայուհիները նույնիսկ ստիպված էին լինում տղամարդու հագուստ կրել՝ իրենց հրապույրները ցույց չտալու համար: Ելնելով ստեղծված ծանր պայմաններից՝ հայերն իրենց աղջիկներին շուտ էին պսակում՝ խուսափելով օտարների ոտնձգություններից:

3. Հասարակական - Ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Լոռիում տիրում էր այն կարծիքը, որ վաղ ամուսնության ժամանակ ավելի հեշտ է լինում երիտասարդ հարսին հարմարեցնել նոր ընտանիքի պայմաններին և մթնոլորտին, քանի որ այդ տարիքում հայ աղջիկը չի ունեցել որոշակի կայուն համոզմունքներ և սկզբունքներ, ուստի ամուսնու ընտանիքում հեշտությամբ հարմարվել է նրանց կենցաղավարությանը: Հայ ընտանիքներում տիրել է այն կարծիքը, որ երիտասարդ հարսը նման է ուռենու ճյուղի, որին կարելի է ցանկացած ձև տալ և ցանկացած կողմի ճկել: Հաճախ հարսներին նմանեցրել են կծկած կծիկի. հոր տանը «կծկած» աղջկան սկեսրանց տանը քանդել և նորից «կծկել են»¹:

Կանանց և աղջիկների նկատմամբ սահմանափակումները թեև ոչ այնքան խստությամբ դրսևորվում էին վաղ տարիքից, առանձնակի խստանում հարսնության ժամանակ և աստիճանաբար նվազում էին, երբ հայուհին դառնում էր մի քանի երեխաների մայր, և հատկապես կնոջ իրավունքները մեծանում էին, երբ նա հայտնվում էր մեծ տանտիկնոջ կարգավիճակում՝ ստանձնելով ներքին կյանքի ղեկավարությունը:

Մանուկ հասակից աղջիկներին սովորեցնում էին կատարել մեծերի տված հանձնարարականները: Մանուկ հասակում աղջիկները կարող էին ազատ խաղալ տղաների հետ՝ մինչև պսակվելու համար սահմանված տարիքը: Լոռիում տիրող սովորույթի ուժով աղջիկները զրկված էին դպրոց հաճախելու հնարավորությունից և իրավունքից: Այնտեղ տիրում էր հետևյալ թեմայով խոսքը՝ «Աղջիկ երեխան ինչ, ուսումն ինչ»: Դրա փոխարեն հայ աղջիկները մեծ հոգատարությամբ և պատրաստակամությամբ հմտանում էին տնայնագործության մեջ. սովորում էին բուրդ գգել, խմոր հունցել, հաց թխել, այծ ու ոչխար կթել, գառներ և եզներ արածեցնել, կալ քաշել, հացահատիկ խախալել, ճախարակ պտտել, իլիկ մանել, պանիր, յուղ, կարագ պատրաստել, լվացք անել, գորգ, կարպետ գործել, շոր կարել, կարկատել, ասեղ-նագործել, օգնել մեծահասակ կանանց և ամենայն պատշաճ ձևով կատարել մեծ տանտիկնոջ ու մյուս կանանց հրահանգները: Արդեն 8-10 տարեկան հասակում հայ աղջիկներին արգելվում էր շփվել տղաների հետ: Նրանց հարսնության էին նախապատրաստում որոշակի վարքականոցների համաձայն: Նախ և առաջ հայուհու ամենակարևոր և պարտադիր հատկանիշը եղել է նրա համեստությունը և անաղարտությունը: Աղջկա բարոյագրկությունն անդրադարձել է ոչ միայն իր և իր ընտանի-

քի, այլև ամբողջ ազգատոհմի պատվի վրա: Արդյունքում առաջացել են փոք ազգանուններ և մականուններ, ինչպես օրինակ՝ Բոզոյան, Սոնենց տներ և այլն:

Սկզբնապես ծնողները, առավելապես հայրը, միանգամայն ինքնուրույն կերպով վճռել է զավակների համար ամուսին գտնելու և ամուսնացնելու հարցերը՝ առանց հաշվի առնելու ամուսնացողների կարծիքը: Գանձակում նույնիսկ մինչև վերջին ժամանակներս հազիվ էր պատահում, որ հայրերն ամուսնացողների կարծիքն իմանային կամ դրան որևէ նշանակություն տային: Ուշադրության են արժանի Մշո գավառի սովորույթները, որոնք կարելի է ընդհանրացնել ամբողջ Հայաստանի համար. «Նահապետական աշխարհների զավակները՝ լինեն նրանք ուստր կամ դուստր, կարելի է ասել բացառիկ իրավունքներից ու ծայնից զրկված են. ուստի և այդ դեպքում զավակների ծնողն իր ձեռքով կըքանդե և կըհանգուցե իր որդկերանց բախտի ու անբախտի հանգույցները, իր աչքերով կըտեսնի իր փեսացուին կամ հարսին, իր քմահաճությամբ կընտրե, կըհավանի, կըվերջացնի իր որդկերանց ամուսնական այդ ծանր ու փափուկ խնդիրները, առանց երբեք վերջինների կամքը հարցնելու և իմանալու»¹:

Հետագայում ընտանիքի հոր ծայրահեղ իշխանությունը զգալի չափով նվազում է: Հասարակական հավաքույթներում տղամարդիկ և կանայք, հատկապես երիտասարդները միմյանցից խիստ մեկուսացած չէին պահում իրենց: Եթե նախկինում կանայք էին իրենց տեղը զիջում տղամարդկանց՝ նստելու, ապա վերջին ժամանակներս, ինչպես և այժմ, տղամարդիկ են զիջում կանանց: Սովորություն է դառնում կանանց հետ զբոսնելը և մտքեր փոխանակելը, տղամարդկանց և կանանց միջև աշխույժ զրույցն ու ժամանցը: Նկատվում է կանանց հանդեպ տղամարդկանց արհամարհական վերաբերմունքի անհետացումը և փոխադարձ հարգանքի արմատավորումը երկու սեռի ներկայացուցիչների միջև: Դա իր ազդեցությունն է ունենում նաև ամուսնական հարաբերությունների վրա: Այժմ ընտանիքի մայրն է հարսնացու ընտրում, երբեմն էլ տան ազապ աղջիկներն ու փոքր հարսները և միջնորդ հանդիսանում: Փոքր ինչ նշանավորվում է նաև տղայի և աղջկա կամքը, մանավանդ երբ նրանք բավականին տարիքով են: Ընդհանրապես տղայի ծնողները ցանկանում էին իրենց որդու համար ընտրել հարմար հարսնացու, որը համապատասխաներ իրենց ընտանեկան վիճակին և կենցաղավարությանը, այլ կերպ ասած՝ լիներ «հալալ կաթնակեր»: Այս դրույթներին ավանդապաշտ լուռեցիները մեծ նշանակություն են տվել:

Լինում էին դեպքեր, երբ գերդաստանից մեկը ժամանակին ինչ-որ բարոյական զանցանք է թույլ տվել և նրա պատճառով, ինչպես իր դուստրերը, այնպես էլ գերդաստանի մյուս անդամները, հավիտենական նախատինք են կրել իրենց չարածի համար:

Ընդհանրապես փեսացուի և հարսնացուի ծնողների կողմից ստացված համաձայնությունն ամուսնության համար հասարակ ժողովրդի մեջ համարվել է ամուսնության էական պայմաններից մեկը: Ամուսնանալ առանց նախապես ծնողների համաձայնությունն ստանալու՝ ժողովուրդը համարել է մեծ մեղք ու դատապարտելի անհնազանդություն: Ամուսնացողներն այդպիսի հանգամանքներում խիստ վախենում էին ծնողների, բայց հատկապես իրենց մայրերի անեծքներից, որոնք ամենասուկալին են համարվել և հավատացել են, թե այդ անեծքը դարերով անցնում է սերնդեսերունդ և մեծ դժբախտությունների պատճառ դառնում: Սակայն ծնողների կարծիքը, առանձին դեպքերում կորցնում է իր վճռական նշանակությունը, եթե այն ուղղված է լինում ամուսնացողների ազատությունը ոտնահարելուն: Այսպիսի պայմաններում տեղի է ունենում աղջիկ փախցնելու սովորույթը: Ամուսնության հարցում մեծ տեղ է տրվել մեծ տանտիկնոջ խոսքին: Հ. Մեղավորյանը գրում է, որ «Տանտի-

¹ Այս մասին մեր հարգելի դասախոս Ռ. Նահապետյանին պատմել է քանագետ Ա. Սահակյանը, որին այդպիսի խորհուրդ է տվել մայրը՝ Յողիմար Սարգսյանը:

կինը և մյուս ամուսնացած կանայք հայկական նահապետական ընտանիքում ավելի բարձր տեղ էին զբաղում, քան նրանց նախնիները հռոմեական կամ հունական ընտանիքում: Տանտիկինը բացարձակորեն անկախ էր տնային գործերում: Տնտեսապես նա ներկայանում էր որպես ազատ անձնավորություն և նույնիսկ շատ գործերում ամուսինը դիմում էր նրա խորհուրդներին ու շատ հաճախ լսում նրան...»¹:

Մեծ տանտիկինը նույնիսկ մի քանի տասնամյակ առաջ և որոշ շրջաններում նույնիսկ արդի 21-րդ դարում կարող էր չհամաձայնել տղայի ամուսնությունը սիրած աղջկա հետ՝ մատնանշելով աղջկա ծնողական կողմերի որևէ բարոյական թերություն: Ամուսնության ժամանակ մեծ նշանակություն էր տրվում հատկապես աղջկա մոր բարոյական բնութագրին՝ «Մորը տես՝ աղջկան առ, դրաղը տես՝ կտավմ առ», որովհետև ըստ ժողովրդական ավանդական առածի, եթե «Եթե մայրը ծառն է բարձրանում, աղջիկը ճղների վրա վազ ա տալիս», կամ «Պտուղը ծառից հեռու չի ընկնում», «Եթե մի խազ քաշած չլինի, մի գազ քաշած կլինի»:

Ընդհանրապես ամուսնացող զույգերի տարիքային տարբերությունը եղել է առավելագույնը 5-10 տարի: Շատ հազվադեպ է պատահել, որ մի աղջիկ ամուսնանա այրի մարդու հետ, որքան էլ վերջինս տարիքով փոքր լինի: Քիչ է պատահել նաև, որ այրի կինը չամուսնացած ամուսին գտնի, որքան էլ վերջինս մեծ հասակ ունենա:

Եթե այժմ 18-20 տարեկան հասակը հայուհու համար համարում են ամուսնության համար ամենալավ և ծաղկուն շրջանը, ապա հայ ավանդական ընտանիքում այդ տարիքի աղջիկը համարվել է «տանը մնացած», «քացախած», «անբախտ» և ծնողների համար համարվել է նախատինք՝ մեծ հոգս պատճառելով նրանց²:

Հետագայում՝ կապված նահապետական գերդաստանի քայքայման հանգամանքի հետ, երբ կազմվեցին հայկական փոքր ավանդական ընտանիքներ, ամուսնական տարիքը փոքր-ինչ մեծանում է: Դա կապված է եղել այն հանգամանքի հետ, որ փոքր ընտանիքում հարսն այլևս չի մնում ահագին գերդաստանի հոգատարության և հսկողության տակ, երբ ամուսինը ծառայում է կամ տարբեր պատճառներով նրա կողքին չէ: Մեծ նշանակություն է ունենում նաև այն հանգամանքը, որ հետզհետե բարոյականությունն ընկնում է, ուստի լոռեցիները խուսափում են գինձառայությունից առաջ ամուսնանալ և այժմ սկսում են ամուսնանալ 21-25 տ. հասակում, իսկ ովքեր չէին ծառայում կամ ունեին որևէ մարմնական արատ, ամուսնացնում էին 16-18 տ. հասակում: Սրա ազդեցությամբ աղջիկների ամուսնական տարիքը սահմանվում է 13-15 տ. հասակը:

Ամուսնության ձևերից Լոռիում տարածված է եղել նաև օրորոցախազը: Այս դեպքում 2 հոգի կանայք միմյանց, շատ հարգելով և միմյանց հետ բարեկամական կապով կապվելու հույսով, պայման են կապում, որ այլասեռ երեխաներ ունենալու դեպքում կամուսնացնեն միմյանց հետ: Երբ երեխաները լույս աշխարհ են գալիս և այլասեռ են լինում, խազում են օրորոցների լծերը (միջնափայտերը)՝ որպես երեխաների նշանված լինելու նշան: Օրորոցախազը կատարվում է նաև այն ժամանակ, երբ մեկի որդիները անբուժելի և մահացու արատ են ունենում, նշանում են՝ հուսալով որ նշանածի բախտը կապրեցնի նրան³:

Ամուսնանալուց հետո միանգամայն փոխվում է լոռեցի կնոջ կարգավիճակը: Իբրև հարգանքի նշան՝ նրանք պարտավոր էին լինում պահպանել չխոսկանություն՝ 1-ին հարսը 5, իսկ մյուս հարսները սկեսուրի հանդեպ 8-10 տարի, իսկ սկեսրայրի հանդեպ՝ ցմահ: Միայն այն դեպքում, երբ սկեսուրը մեռած լիներ, և սկեսրայրը հիվանդ ու խնամքի կարոտ, թույլատրվում էր առաջին հարսին խոսել սկեսրոջ հետ:

Ամուսնանալուց հետո հարսի երեսին քոլ են անցկացնում և թույլատրում դա

հանել միայն 2-3 երեխա ունենալուց հետո: Սակայն Դ. Վարդումյանն իր 1956 թ. գրած «Լոռեցիների նոր կենցաղը» աշխատության մեջ հայտնում է, թե արդեն երկար ժամանակ հայ կինը չի կրում չխոսկանության խորհրդանիշ հանդիսացող «դնչկալը» նույնն է թե՛ քոլը, չնայած որ բազմաթիվ ավանդապաշտ ընտանիքներում մոտ 1 տարի հարսները չխոսկան են մնում: Հայ իրականության մեջ չափազանց խիստ ձևով նախատվել են «չխոսկան» (որը կրում է քոլ/Յ.Մ./), բայց իրականում լեզվանի հարսները. դա նույնիսկ հիմք է տվել մի հայտնի հին ժողովրդական ասացվածքի՝ «Երեսը՝ պատին, խոսքը՝ ճակատին»¹:

Քողի կիրառությունը կապված է եղել կնոջ ներփակ կյանքի ու չխոսկանության հետ, միաժամանակ նաև սեռական արգելքի հետ: Օտարների տիրապետության պայմաններում հայ օրիորդները և կանայք ստիպված էին դուրս գալ ուղեկցորդների հետ՝ մինչև աչքերը շալերով ծածկված: 1918-1920 թթ. թուրքական ներխուժումների ժամանակ հայ երիտասարդ կանայք (հատկապես արևմտահայ փախստական կանայք) դեմքերին ծեծած սխտոր էին կապում՝ վերքոտ և անհրապույր երևալու համար:

2-3 երեխաների մայր դառնալուց հետո հարսի իրավունքներն ընդարձակվում էին. քոլը հանում էին նրա երեսից (այդ արարողությունը հայտնի է «երեստեսնուկ» անվամբ), գերդաստանում ձևավորվում էր հարգանքը նրա նկատմամբ: Եթե մինչև բազմազավակ մայր դառնալը նա կաշկանդված էր, ապա այժմ վայելում էր գերդաստանի ազատ հարաբերությունները և պատիվ-հարգանքը:

Ընդհանրապես հայ կնոջ նշանակությունը հայ ավանդական ընտանիքում արտահայտվել է 2 ձևով՝

1. Կինը ապահովում էր հայ ավանդական ընտանիքի սերունդը,

2. Իբրև աշխատավոր կինն անհրաժեշտ էր գերդաստանին ընդհանուր տնտեսությունը զարգացնելու և հարստացնելու համար:

Կնոջ իրավազրկությունը արտահայտվել է ամուսնական կյանքի բազմաթիվ կողմերում. կինը մասնակից չի եղել հասարակական կյանքին և ընտանեկան խորհուրդներին՝ բացառությամբ մեծ տանտիկնոջ, նա պարտավոր է եղել հարսնություն անել նույնիսկ 10 տ. տեղոր առջև, իրավունք չի ունեցել խոսել այլ տղամարդկանց հետ և իր ամուսնու հետ՝ ուրիշների ներկայությամբ, անուճով դիմել իր ամուսնուն: Տղամարդիկ առանձին են նստել և նրանցից առաջ են ճաշել: Տղամարդը տարբեր թեմաներով ամոթ է համարել խորհրդակցել իր կնոջ հետ, որովհետև տղամարդիկ կարծում էին, թե «կնոջ մազերը երկար են, խելքը կարճ», այդ պատճառով էլ կնոջ կարծիքներին նշանակություն չեն տվել: Չավախքում ամուսնու աչքում «կինն ոչ այլ ինչ է, եթե ոչ իր կրքերին հագուրդ տվող մի ծախված պուտուկ և մի ստրուկ աղախին»:

«Հորդ ալ ինչի 100 մանեթ տվի, որ աս բանը չպիտի էնիս»², - սրանք կնոջ՝ մի որևէ աշխատանքից հրաժարվելու ժամանակ ամուսնու կողմից ուղղված խոսքերն էին:

Հարսներին սովորեցնում էին նախ և առաջ լինել չափազանց աշխատասեր՝ «Հարսը պարապ չի մնա», առանց մոր կամ տանտիկնոջ իմացության որևէ տեղ չգնալ, միշտ լինել պատրաստակամ հանձնարարությունները կատարելու:

Կնոջ ամենակարևոր պարտականություններից մեկը ամուսնուն հնազանդվելն էր: Եթե կինը պատշաճ ձևով չէր կատարում սահմանված պարտականությունները և որևէ բարոյական հանցանք էր կատարում, ամբողջ համայնքը պարսավում էր նրան՝ անվանելով «աներես», «ամոթը կորցրած», «երեսի փարդը պատռած», «անզգամ»...

Թերևս կնոջ ամենակարևոր պարտականությունը հավատարմությունն էր իր

¹ Տե՛ս Մեղավորյան Գ., Ազգագրական և իրավաբանական ուսումնասիրություն հայ ընտանիքի և ամուսնության վերաբերյալ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ արխիվ, ֆ. 102, էջ 101:

² Տե՛ս Լալայան Ե., էջ 121-122:

³ Տե՛ս նույն տեղում:

¹ Տե՛ս Վարդումյան Դ., Լոռեցիների նոր կենցաղը, Երևան, 1956, էջ 89:

² Տե՛ս Սամուելյան Խ., էջ 179:

ամուսնու նկատմամբ: Կինը պարտավոր է լինել ավելի հանդուրժող, ողջախոհ և ամուսնուն հավատարիմ: Շատ տեղին է նշել Ֆ. Էնգելսի տիպիկ բնութագրությունը ամուսնական հավատարմության մասին՝ «Այն, ինչ կնոջ համար ոճրագործություն է համարվում և ծանր օրինական և հասարակական հետևանքներ է առաջ բերում, այն տղամարդու համար պատվաբեր բան է համարվում կամ վատթարագույն դեպքում՝ բարոյական մի թեթև բիծ, որ նրանք հաճույքով են կրում»¹:

Ամոթալի ու անպատվաբեր էր համարվում հարսին հերարձակ, ինչպես նաև ոտնաթաթն ու կրունկը բաց տեսնելը: Երիտասարդ աղջիկներին և կանանց արգելվում էր կտրել մազերը, ներկել աչքերը (թույլ էր տրվում միայն հինա դնել ձեռքերը), կինն իրավունք չուներ նաև այլոց ներկայությամբ սանրել մազերը, երեխան գրկած ման գալ տանը, արգելված էր նաև ցերեկով առանձնանալ ամուսնու հետ, ամուսնու առաջ հաց դնել և այլն:

Ըստ լոռեցիների վաղեմի սովորույթների՝ հստակ տարանջատված էին մեծ տանտիկնոջ, ավագ և կոտսեր հարսների աշխատանքները. մեծ տանտիկինը հաց է թխել, կերակուր եփել և բաժանել, ճախարակ մանել: Ավագ հարսը խնոր է հունցել, ճախարակ մանել, կով կթել, սար գնացել, ուր պանիր է պատրաստել, խնոցից յուղ է հանել: 2-րդ և 3-րդ հարսները այլուր են մաղել, թոնիր վառել, գորգ և կարպետ գործել, կարել, կարկատել, հաց տարել արտը, կալը կալսել:

Փոքր հարսը վաղ առավոտյան գնացել է ջուր բերել, սկեսրոջ և սկեսրայրի հագուստները հագցրել, ձեռքերին ջուր լցրել, անկողինները հարդարել, տունն ավելել, կրակ արել, կերակուր մատուցել, սեղանը հավաքել, բացի իր ամուսնուց բոլոր տղամարդկանց տրեխները հանել, ոտքերները շփել ու լվացել²...

Երիտասարդ կանանց մասին սովորաբար ասվում էր. «Կնիկ մարդ ձեռաշոր է», «Կնիկ մարդ պետք է փակ լինի, իրավունք չունի օտար կամ դրացի մարդու թև ընկնի», «Ամուսինը կնոջ թագավորն է», «Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնիկ որ կա՝ ոտ է»: Առանձնակի պատիվ չուներ ամուլ կինը, որը նմանեցվում էր անպտուղ ծառի՝ «չոր կոճղի», մինչդեռ բազմազավակ մայրը արժանանում էր մեծամեծ պատիվների: Առավելապես խրախուսվում էր տղա երեխաների ծնունդը, իսկ աղջիկ երեխաների ծնունդը համարվում էր դժբախտություն, որն արտահայտվում էր նորածնին ցույց տրվող անբարյացակամությամբ և նորածնի ծնողներին ուղղվող մխիթարական խոսքով՝ «Դուք ողջ ըլեք, աղջիկ բերողը տղա էլ կբերի», մինչդեռ տղա ծնվելիս շնորհավորում էին՝ ասելով՝ «Աչքներդ լիս, ծիլ, ծաղկի, մինը օխտը դառնա»: Այն հանգամանքը, որ աղջկա ծնունդն այնքան էլ ցանկալի չի եղել, թերևս ամենալավ վկայություն կարելի է համարել մեզ հասած հետևյալ ժողովրդական առածը՝ «Վռա-գողին տղա չի ծնվի»: Նորածին տղային պատվում էին խավիժով, ձվածեղով և այլն: Գնալով, սակայն այս ծայրահեղ ավանդական մոտեցումները փոխվում են, և աղջիկ երեխայի ծնունդը նույնքան ուրախություն է պատճառում, որքան տղայինը: Գնալով լոռեցիների մեջ արձատավորվում է հետևյալ ասացվածքը՝ «Չիմի աղջիկ թե տղա, մին ա»³:

Վերջին ժամանակներում արդեն վերանում է «տանը մնացած» աղջկա նախկին հասկացողությունը, որը տրվում էր աղջկան՝ անգամ 16-20 տ. հասակում, մինչդեռ այժմ տղա ու աղջիկ ամուսնանում են ավելի ուշ՝ 20-25 տ. հասակում: Միաժամանակ աղջիկը սկսում է համարվել ընտանիքի հավասար անդամ:

Ամուսնական և ծնող-զավակ հարաբերություններում որոշակի ձևով դրսևորվում էին խուսափման սովորույթները: Օտարների ներկայությամբ ծնողները և հատկապես հայրը խուսափում էին երեխային գուրգուրելուց և սիրելուց: Ամուսինները ուրիշների ներկայությամբ ոչ միայն չէին խոսում իրար հետ, այլև իրար դիմելուց ոչ

¹ Տե՛ս Էնգելս Ֆ., էջ 100:
² Տե՛ս Լալայան Ե., էջ 157:
³ Տե՛ս Վարդունյան Դ., էջ 90:

թե իրենց անուններով, այլ ծննդավայրի, ծնողների կամ երեխաների անուններով էին խոսում:

Չնայած հայ կնոջ նկատմամբ կիրառվող սահմանափակումներին՝ այնուամենայնիվ, նա իր պարկեշտության, աշխատասիրության և երեխաների շնորհիվ արժանանում էր հարգանքի և պատվի: Ընդհանրապես հայերը կնոջ նկատմամբ վերաբերմունքը համարել են պատվի հարց և չի կարելի հայ կնոջը իր իրավունքներով համեմատել արևելքի իրավագուրկ կնոջ հետ:

1843 թ. Հայաստան ժամանած Բարոն Օգոստոս Ֆոն Հակստհաուզենը գրում է, որ համեմատած Ասիայի այլ ժողովուրդների հետ, հայ կանայք ունեն «հավասարութիւն իրաւանց և արժանաւորութիւն... առ մահմեդականս կանայք ի ծառայարանց լինել ծնեալք են, քան թէ հաւասար նոցին... Եւ այսչափ յարգ և վարկ ունի՝ որչափ և ոչ կանայք Եվրոպիոյ»¹:

Ռուս նշանավոր ճանապարհորդ և ազգագրագետ Ալեքսանդրովը գրում է. «Կանանց դաստիարակումը գերծ չէր որոշ խստություններից, բայց այն չի կարելի անվանել ոչ ստրկություն, ինչպես մահմեդականների մոտ, ոչ ճնշում»²:

Իսկ անվանի հնագետ Կարո Ղաֆադարյանը իր կատարած ուսումնասիրություններով վկայում է, որ «Հայաստանում կինը առանձնապես չի ստրկացվել ոչ ստրկատիրական կարգերի օրով, երբ կային անգամ կին աստվածներ (Անահիտ, Աստղիկ, Նանե) և ոչ էլ միջին դարերում, ավատական կարգերի օրով, երբ կինն անգամ շինարարական աշխատանքների և նվիրատվությունների մեջ հանդես է գալիս իբրև բարեգործ իր ամուսնու կամ հոր ու եղբայրների հետ հավասար, երբ նրանց հիշատակին կամ արևշատության համար եկեղեցիներում պատարագ է մատուցվում: Ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանի այր և կնոջ դաշինքի օրինակ կարող է ծառայել 1969 թ. Ներքին Դվինում բացված դամբարանի քանդակագործ քարոջ Բարի վրա պատկերված են կողք-կողքի կանգնած տղամարդ ու կին, իրար ձեռք բռնած, որ նրանց միասնությունն ու սիրո դաշինքն է ազդարարում»:

Իսկ ռուս ճանապարհորդ և բժիշկ Ա. Ելիսեևը գրում է, որ Թուրքիայում չկա մի տուն, որ հայի ձեռքով կառուցված չլինի, մի կտոր, որ հայի ձեռքով գործված չլինի, մի պտուղ, որ հայի այգուց դուրս եկած չլինի և, որ շատ բաներում հայ տղամարդը պարտական է իր գլխավոր օգնականին՝ հայ կնոջը, քանզի «Միշտ գործունյա հայուհին ճշմարտապես կարող է համարվել հայ ազգության գլխավոր հենարանը: Հայ կինը այն շաղախն է, որ միացնում և ամրապնդում է հայ գերդաստանը ընդ սմին և հայ ազգությունը գլխովին... Անխոնջ աշխատասիրությունը հայուհու կյանքի անբաժան հատկանիշն է՝ գլխավոր առաքինություններից մեկը...»³:

Հայ կնոջ դերի և պահվածքի մասին բանախոսական բազմաթիվ հուշեր կան պահպանված՝ առածներ, թևավոր խոսքեր, շրջասույթներ, դարձվածքներ, պարադոքսներ և այլն: Օրինակներ՝ «Կնիկը որ լավ ըլնի, մի էթա հարսանիք, տանըդ ամեն օր հարսանիք ա ու հարսանիք. թե կնիկըդ փիս ըլնի, մի էթա մեռլատուն, տունդ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն», «Լավ կնիկը տուն ու տեղ ա, վատ կնիկը՝ ամեն օր մեռլատուն ա ու մեռլատուն», «Մեռնի քո կնիկ, ավրի քո տնիկ», «Տուն թող կնիկ էլնի, թող գեշ էլնի», «Կնիկը կը թանկ ի յուր գլխավորով, տղեն՝ իր խեր ու մերով», «Կնիկը տղամարդու հոգին ա», «Կնիկ մարդ որ կա՝ մարդու կյանքն ա»...

Հայ կնոջ անգնահատելի դերի մասին է բանագետ Սարգիս Հարությունյանի հետևյալ տիպիկ բնութագրությունը՝ «Հա անկնիկ տուն, հա անալուր ջաղաց»:
Ամփոփելով նշենք, որ հայկական ավանդական ընտանիքում հայ կինը, չնայած

¹ Տե՛ս «Բարոն Օգոստոս Ֆոն Հակստհաուզենայ ճանապարհորդութիւն յայս կոյս Կովկասու, այն է ի Հայս և ի Վիրս», քարգմ.՝ Արիստակէ վարդապետ Սեդրակեանի, Վարդաշապատ, 1872, էջ 194-199:
² Տե՛ս Александров Н. А., Закавказье. Армяне (Чтение для народа). Москва, 1901, էջ 15:
³ Ա. Ելիսեևի այս վկայությունները լույս են տեսել Պետերբուրգում «Северный вестник» ամսագրի 1988 թ. համարներում: Հայ կանանց վերաբերյալ հատվածները թարգմանաբար լույս են տեսել «Մշակ», «Արծազանք» և «Արևելյան մամուլ» շաբաթաթերթերում:

բազմաթիվ սահմանափակումներին և արգելքներին, ընդհանուր առմամբ իր բարի վարքով մեծ հարգանք է վայելել, ինչպես հաճախ ասում են՝ «Ողջախոհ կինը, հնազանդվելով հանդերձ ամուսնուն, հրամայում է նրան»:

Генри Матинян

ЖЕНЩИНА В ТРАДИЦИОННОЙ АРМЯНСКОЙ СЕМЬЕ
(Согласно этнографическим обычиям лорийцев)

На основе существующих материалов в статье анализированы традиционный статус армянской женщины в Лори, её права, обязанности, место и положение в отношениях мужчины и женщины. Обычаи, касающиеся лорийских женщин, сравнены с обычиями разных местожительств той же области и с обычиями разных областей. Обсуждены так же вопросы о воспитании, ограничении прав армянской женщины в разных этапах жизни от малых лет до старости.

Henri Matinyan

THE ROLE OF WOMAN IN TRADITIONAL ARMENIAN FAMILY
(According to the Traditions of Lorri Residents)

The following articles studies the traditional role of Armenian woman in Lorri region, together with her rights, duties, the place and role in the relationship between man and woman. The traditional way and manners of dealing with the women coming originally from Lorri are compared with the traditions of different valleys of the same region and other regions. The upbringing of Armenian woman, the behavioral limits in different stages of life starting from a very young age to an old housewife is also discussed.